

OneGeology

Բրայթոնյան Համաձայնագիրը

Քառասուն երեք երկրներ եւ հիսուն երեք ազգային եւ միջազգային կազմակերպություններ ներկայացնող ութսուն մեկ մասնակից 2007թ. մարտի 12-16 հանդիպեցին Բրայթոնում, Միացյալ Թագավորություն՝ քննարկելու եւ համաձայնելու, թե ինչպես կատարելագործել գլոբալ, տարածաշրջանային եւ ազգային երկրաբանական քարտեզների տվյալների մատչելիությունը եւ այդ կերպ բարձրացնել դրանց օգտակարությունը հանրության համար:

Համաժողովի մասնակիցները հաստատեցին, որ շրջակա միջավայրին սպառնացող վտանգների մեղմացման առումով երկրաբանական քարտեզների տվյալները շատ կարեւոր են գիտության եւ կրթության արաջընթացի համար՝ ապահովելով էներգիայի, օգտակար հանածոների եւ ջրի անխափան մատակարարումը, ինչպես նաեւ դրանք շատ կարեւոր են կլիմայի փոփոխությանն առնչվող մարտահրավերների հաղթահարման առումով:

Առաջարկություններ

Մասնակիցները համաձայնեցին, որ հաջորդող 10 առաջարկությունները պետք է փոխանցվեն Երկրաբանական ծառայություններին ու կազմակերպություններին, եւ որ մասնակիցները կձգտեն աջակցել, որպեսզի բոլոր այն Երկրաբանական ծառայությունները եւ կազմակերպությունները, որոնք ներկայացված չէին Բրայթոնում, ծանոթանան այդ առաջարկություններին:

1. OneGeology նախաձեռնության առաքելությունը հետեւյալն է՝

OneGeology-ն Բրիտանական Երկրաբանական ծառայության նախաձեռնությունն է, որն սկսվել է Երկիր Մոլորակ միջազգային տարում եւ ուղղված է աշխարհի լավագույն երկրաբանական քարտեզների, սկզբում 1:1միլիոն մասշտաբի, ինտերնետում տեղադրման միջոցով երկրաբանական տեղեկատվության ոլորտում հանրության պահանջարկի բավարարմանը:

2. OneGeology-ն նպատակաուղղված է գոյություն ունեցող երկրաբանական քարտեզների մատչելիության ապահովմանը, համաձայնելով, որ այն կխթանի քարտեզագրման տվյալների գիտական ներդաշնակությունը ամբողջ աշխարհում:

3.. OneGeology-ն, որպես առաջնություն, կապահովի 1:1միլիոն մասշտաբի երկրաբանական քարտեզների տվյալների մատչելիությունը: Բացի այդ, OneGeology-ն կապված եւ համատեղելի կլինի նաեւ հանրության համար մատչելիությունն ու ավելի մանրակրկիտ քարտեզագրումը ապահովող կիրառական ծրագրերի հետ:

4. OneGeology-ի նպատակն է օգտակար լինել հանրությանը եւ բարձրացնել քարտեզագրման տվյալներ տրամադրող Երկրաբանական ծառայությունների եւ կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը:

5. OneGeology-ն եւ նրա մասնակիցները կհայթհայթեն իրենց աշխատանքները եւ նպատակները սատարող ֆինանսավորման աղբյուրներ, ինչպէս նաեւ կմշակեն փոխադարձ սատարման ռազմավարություն՝ ուղղված OneGeology-ի ներդրմանը եւ մասնակիցների կարողությունների բարձրացմանը:

6. Մասնակիցները համաձայն են, որ OneGeology-ի մաս կազմող քարտեզագրման տարածվող տվյալները մնում են այն տրամադրող Երկրաբանական ծառայության կամ կազմակերպության սեփականությունը եւ իդեալական տարբերակով մատչելի են անվճար:

7. OneGeology-ն կղեկավարվի Երկրաբանական ծառայությունների եւ կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված Ղեկավար Խմբի կողմից եւ կհաղորդակցվի Երկրի մասին գիտությունների ոլորտին առնչվող կազմակերպություններից կազմված Միջազգային Համակարգող Կոմիտեի հետ. OneGeology-ն կհամագործակցի քարտեզագրման հանրության առավել լայն շրջանակների հետ: Նպատակներին հասնելու համար կստեղծվեն նպատակային խմբեր: Նախաձեռնության կայուն աշխատառճը եւ անխափան աշխատանքը ապահովելու համար կստեղծվի Քարտուղարություն, որը մինչեւ 2008թ. դեկտեմբեր ամիսը կտեղակայվի Բրիտանական Երկրաբանական Ծառայությունում:

8. OneGeology-ի առաջնահերթ խնդիրն է Ինտերնետի միջոցով մատչելի դարձնել գիտական փոխկապակցված տվյալները եւ առաջընթաց ապահովել մասնակիցների կարողություններին հարիր մակարդակներում:

9. Երկրաբանական ծառայությունները եւ կազմակերպությունները պետք է համատեղ աշխատանքով ապահովեն պահանջվող չափանիշների փոխհարաբերակցությունը եւ տվյալների փոխկապակցվածությունը:

10. OneGeology-ի առաջընթացը կներկայացվի 2008թ. Օսլոյում կայանալիք Միջազգային Երկրաբանական կոնգրեսում՝ ցույց տալու քարտեզագրման տվյալների Ինտերնետի միջոցով մատչելիության հնարավորությունները:

Սույն Համաձայնագիրը մշակվել եւ միաձայն ընդունվել է 2007թ. մարտի 16-ին OneGeology-ի Համաժողովում, որը կայացել է Բրայթոնում՝ Միացյալ Թագավորություն: